

Կալիֆորնիայում Դուք կարող եք ատելության հանցագործության զոհ լինել, եթե թիրախավորվել եք Ձեր հետևյալ առանձնահատկության պատճառով.

- » ռասայական կամ ազգային պատկանելություն,
- » քաղաքացիություն, կրոն,
- » սեռական պատկանելություն, սեռական կողմնորոշում,
- » ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն, կամ
- » վերոհիշյալ «իրական» կամ «թվացյալ» առանձնահատկություններից մեկը կամ մի քանիսն ունեցող որևէ անձի կամ խմբի հետ Ձեր առնչությունը:

Ատելության հանցագործություն, թե՞ ատելության միջադեպ

Կարևոր է գիտենալ ատելության հանցագործության և ատելության միջադեպի տարբերությունը:

Ատելության միջադեպ ատելության դրդապատճառով կատարվող գործողություն կամ դրսևորվող վարքագիծ է, որը սակայն իրավականորեն պաշտպանված է Սահմանադրության Առաջին հավելվածի ինքնարտահայտման ազատության իրավունքի ներքո:

Ատելության միջադեպերի օրինակ են.

- անվանարկումը,
- վիրավորանքը,
- հանրային վայրերում ատելություն սերմանող նյութերի տարածումը և
- ատելություն սերմանող նյութերի տեղադրումը Ձեր սեփականության տարածքում:

ԱՄՆ Սահմանադրությունը թույլատրում է ատելություն սերմանող խոսքն այնքան ժամանակ, որքան այն չի միջամտում այլոց քաղաքացիական իրավունքներին: Եթե ատելության միջադեպը սկսում է սպառնալ մեկ այլ անձի կամ սեփականության, այն կարող է **ատելության հանցագործություն** դառնալ:

Ատելության հանցագործությունը

հանցագործություն անձի, խմբի, կամ ունեցվածքի դեմ, որի դրդապատճառը պաշտպանված այս կամ այն սոցիալական խմբին զոհի իրական կամ թվացյալ պատկանելություն է: Օրենքը պաշտպանություն է տալիս ատելության հանցագործությունների բազմաթիվ տեսակներից:

Ի՞նչ անել ատելության հանցագործության ականատես լինելիս

Հանցագործության մասին հաղորդագրություն տվեք տեղական ոստիկանական բաժանմունք: Զգեկուցվելու դեպքում ատելության հանցագործությունները կարող են շարունակվել:

Ինչպե՞ս նկատել ատելության հանցագործությունը

Հնարավոր ատելության հանցագործության նշանները հետևյալն են.

- Հանցագործը զոհին կամ ունեցվածքն ընտրել է որևէ պաշտպանված խմբի, օրինակ՝ կրոնի կամ սեռի դրանց պատկանելության պատճառով:
- Հանցագործը գրավոր կամ բանավոր մեկնաբանություններ է արել, որոնք կանխատրամադրվածություն են ցույց տալիս:
- Հանցագործության ամսաթիվը զոհի պաշտպանված խմբի համար կարևորություն ունի:
- Տվյալ տարածքում ատելության հիմունքով կազմակերպված գործունեության զգալի առկայություն կա:

«Երբ որևէ մեկն ատելության դրդապատճառով հանցագործություն է կատարում, ապա դա ոչ միայն անմեղ անձի դեմ է ուղղված, այլև ողջ Պետության»:

Xavier Becerra

Կալիֆորնիայի Գլխավոր դատախազ

Եթե ատելության հանցագործության զոհ եք դարձել, ապա.

- Անմիջապես դիմեք տեղական ոստիկանական բաժանմունք:
- Բժշկական օգնություն հայցեք (եթե անհրաժեշտ է):
- Հշգրտությամբ գրառեք այն ամենը, ինչ ասվել է:
- Գրառեք որևէ այլ փաստ, որպեսզի չմոռանաք այն:
- Պահպանեք բոլոր ապացույցները (օրինակ՝ գրաֆիտի, ձվի կեղև, զոհի ավտոմեքենայի վրա գրված որևէ բան): Եթե ապահով է, ապա սպասեք մինչև իրավապահները ժամանեն ու լուսանկարեն:
- Վերցրեք այլ զոհերի և վկաների անունները, հասցեները, հեռախոսահամարներն ու էլ. փոստի հասցեները:
- Փորձեք որևէ ականատեսից ստանալ հանցագործի կամ ավտոմեքենայի նկարագրությունը:
- Չանգահարեք ատելության հանցագործություններով զբաղվող տեղական համայնքային կազմակերպություններին:

Ի՞նչ կարող եք անել՝ Դուք և Ձեր համայնքը

- Խոսել ատելության և անհանդուրժողականության դեմ:
- Համայնքային հավաքներ ունենալ հաջակցություն զոհերի:
- Չոհերին օժանդակություն և օգնություն առաջարկել:
- Պետական պաշտոնյաներին հորդորել՝ խոսել ատելության հանցագործությունների դեմ:
- Ստեղծել ատելության հանցագործությունների դեմ պայքարի ցանց՝ իրավապահ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցների, կրոնական կազմակերպությունների և համայնքային կազմակերպությունների մասնակցությամբ: Խնդրեք նրանց՝ ատելության հանցագործություններին արձագանքել անհապաղ և նպաստել կանխարգելման ու տեղեկացվածության ջանքերին: